ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
«Հայաստանի գյուղատնտեսական հաշվառման պիլոտային ծրագրի համար վիճակագրական կարողությունների զարգացում և իրականացման աջակցություն» դրամաշնորհային ծրագիր
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ No. TF013918

Խորհրդատվական ծառայության անվանումը՝ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համար սխեմատիկ հատակագծերի պատրաստման աշխատանքների

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ SAPSC- C- 2.1.1

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է «Հայաստանի գյուղատնտեսական հաշվառման պիլոտային ծրագրի համար վիճակագրական կարողությունների զարգացում և իրականացման աջակցություն» դրամաշնորհային ծրագիր TF013918 դրամաշնորհային ծրագիր և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

Սույն հանձնարարականի հիմնական նպատակն է ՀՀ 2014թ. անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպելու համար նախապատրաստել Արագածոտնի մարզի Սասունիկ, Կոշ, Ուջան, Արտենի, Արագած (Ապարանի շրջ.), Կարբի Ոսկեվազ, Բյուրական, Փարպի, Օհանավան, Քուչակ, Ծաղկահովիտ, Հնաբերդ, Մաստարա, Արարատի մարզի Քաղցրաշեն, Այգեզարդ, Փոքր Վեդի Նորաշեն, Հովտաշատ, Տափերական, Վերին Արտաշատ, Այգավան, Ազատավան, Դալար, Ն. Դվին, Արմավիրի մարզի Բաղրամյան (Էջմիածնի շրջ), Հայթաղ, Ջրառատ, Նորակերտ, Գեղակերտ, Ջանֆիդա, Բամբակաշատ, Ոսկեհատ, Գայ, Մերձավան, Արմավիր, Աղավնատուն, Արշալույս, Դալարիկ, Մյասնիկյան, Քարակերտ, Արագած, Լոռու մարզի Շահումյան, Ջրաշեն, Մրգահովիտ, Կոտայքի մարզի Լեռնանիստ, Շիրակի մարզի Փանիկ, Պեմզաշեն, Սառնաղբյուր, Փոքր Մանթաշ, Առափի, Մարմաշեն, Ոսկեհասկ, Ամասիա, Աշոցք, Անուշավան,

Հոռոմ, Մեծ Մանթաշ, Տավուշի մարզի Ազատամուտ, Բագրատաշեն, Բերդավան գյուղերի սխեմատիկ հատակագծերը:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածն է մոտավորապես 4 ամիս է:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը եւ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ համապատասխան որակավորում ունեցող Խորհրդատվական ընկերություններին (այսուհետ՝ Խորհրդատուներ) հրավիրում են ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Ունենա ընդհանուր փորձ նմանատիպ հետազոտությունների համար Խորհրդատվության տրամադրման ոլորտում՝ միջազգային կամ դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում,
- Ունենա առնվազն երեք տարվա փորձառություն՝ նմանատիպ ծառայությունների մատուցման ոլորտում,
- Փորձը Հայաստանում կդիտարկվի որպես առավելություն:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի հունվարի 11-ի «Ուղեցույցի՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի ՀԲ-ի Խորհրդատուների Ուղեցույցներում սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչեւ 2014 թ.-ի ապրիլի 16-ը, ժամը 18:00:

ՀՀ ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Կառավարության տուն 1,
Հանրապետության հրապարակ,
Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-10) 52 34 71
Ֆաքս՝ (374-10) 545 708
Էլ-փոստ՝ info@ffpmc.am